



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՒՌՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԵՐԵՄԵՐՈՐԴԻ ԵՐԿՐՈՐԴ՝ ՏԱՐԻ

ԶՄԻՒՌՆԻԱ ԸՆԴԵՐՈՒՄ 3 ՅՈՒՆԻՍ 1872

ԹԻՒ 937

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Պաղարկոյ խորհրդանոցին մէջ մտաւր կարեւոր վե-
ճաբանութիւններ եղան ի մասին նոր կարգադրու-
թեան ազգային զինուորական զօրութեանց : Այս
առթիւ երկու ու պատուական ատենախօսութիւններ
ըրին զլիաւոր զինուորական երեսփոխանները . որոց
մէջ երեւելի հանդիսացաւ Վարդի զօրապետը . որ
ուրիշ խելացի խօսքերէ ի զատ , ըսաւ թէ զօրաբա-
նակին նուաստանալը և վատթարանալը առաջին կայ-
սերութեան ժամանակէն սկսած է . որ թողլով հա-
պարկապետութեան հայրենասիրական սկզբունքը ,
չքանչանեցով , վարձատրութիւններով և փառաւոր
տնտեսներով ապականոց զօրաբանակին բարքը և
վարքը . և յաւելցուց թէ անոր զլիաւոր վէրքը ե-
րեք են այժմ . այսինքն նախ՝ անձնական փոխանա-
կութիւնն (1) , երկրորդ՝ կեդրոնացումն , որուն պատ-
ճառաւ զօրապետը չեն կրնար շուտով պատրաստ
լինել ի պատերազմ . երրորդ՝ զինուորականաց բա-
րոց ապականութիւնը : Ասոնց իրեւ դարման յիշ-
եալ գիտնական զօրապետը առաջարկեց ազգային
պատրաստութիւնը վերանորոգել , անաշուտ կրթու-
թեան և ստատիկ հնազանդութեան դրութիւնը հաս-
տատել զօրաբանակին մէջ , ինչպէս նաեւ անոր ապա-
կեցութեանը խոհանարար կերպիւ ի գործ դնել :

Վարդի զօրապետին այս հայրենասիրական ազգո-
յուն խօսքերը մեծ ազդեցութիւն ըրին խորհրդանո-
ցին անգամայն վերայ . որոց մեծադոյն մասին հաւա-
նութեամբ՝ առաջարկուած զինուորական ծառայու-
թեան օրէնքը բնորոշուեցաւ . որ է հարկադրիչ և
յաւանդ անձնական փոխանակութեան :

Ինչպէս կրտսերնորի , Վաղարշ կառավարութիւնը
առայում միայն ներքին գործոց վրայ մեծապէս ըգ-
րադրաւ , և կաշխատի իւր զինուորական զօրութիւնը
աւելցնել , զարդարել և այնպիսի վեճակի մը մէջ
դնել , որպէսզի շատ չանցած կարող ըլլայ իւր ազ-
գային պարտութեան վրէժը առնուլ Վերամիայէն :
Սակայն տակաւին զերմանական զօրադնդերը Վաղարշ
երկրին մէջ կը դնուէին , վառնդի պատերազմին ծա-
խոյ համար որոշեալ զուգարէն տակաւին 3 հազար
միլիոն ֆրանք չվճարուեցան Վերամիայ կայսերա-
կան կառավարութեան : Թեպէտեւ Հասարակապե-
տութեան նախագահ մտնէ թիւերին և փարկի Վեր-
մանիոյ դեսպանին մէջ բանախօսութիւններ կը լինին
յիշեալ դամարը իւր պայմանաւորման յառաջ վճա-
րելու , որպէսզի զերմանական զօրքը օր յառաջ
զարդիական երկրէն դուրս ելին , բայց տակաւին
այս բանախօսութիւններն յաջող վախճան մի չունե-
ցան : Տարակոյս չկայ թէ այս գործն ալ պիտի ըլլն-
այ . սակայն ոչ այնչափ շուտով , որչափ կը փափաքի
զաղղիացի ազգը . քանզի խնդրոյն լուծումը դժուա-
րին և աշխատալի է . մանաւանդ որ Վերմանական
կառավարութիւնը ամենին վստահութիւն չունի
Վաղարշ խաղաղասիրական գոյացմանը վերայ , և կու-
զէ կարելի եղած ապահովութիւնները ձեռք ձգել
զոնէ վստի մօտաւոր ապագային :

Վերմանիոյ օրագիրները մեծ համակրութեամբ
կ'ողջունեն խաղաղ գահաժառանգ իշխանին և իւր
լծակցին Վարկարթի իշխանուհւոյն ի Պէրլին ժա-
մանելու : Արդի թագաւորազն Բարձրութիւնը , որ նոյն
խի վեճաւ . Վիլլիմ կայսերէն բազում սիրով ընդու-
նուեցաւ ի կայաբան երկաթուղւոյն , ներկայ պիտի
գտնուի իրեւ կնքահայր , Վերմանիոյ իրէտէրիք—
Վիլլիմ գահաժառանգ իշխանին եօթներորդ զաւակին
մկրտութեան հանդիսին : Թեպէտեւ Մեթերնի Տէ-
լմանի օրագիրը կըսէ թէ այս ճանապարհորդութիւնը
ամենին քաղաքական նպատակ մի չունի , բայց Պաղ-

(1) Ուրիշ մէկը իւր տեղը դնելով՝ զինուորական
ծառայութեան ազատ մնալը :

ղիոյ ընդդիմամարտ թերթերը կաշխատին հաստատե-
լու թէ յիշեալ տեսակցութիւնը նոր քայլ մըն է ի
գաշխակցութիւնն ի մէջ Վերմանիոյ և խաղաղ
կառավարութեան . գաշխակցութիւն՝ որուն վրայօք
ժամանակէ մը ի վեր շատ խօք կը լլայ կենցաղագէտ
հասարակութեան մէջ :

Սոսիւ տը Պիսմարք իշխանը արդէն հանդստա-
ցած է վարդէնի իւր դընակը որ ի Նոմբրանիա .
որ ըստ խորհրդոյ բժշկաց , վեց ամիս պիտի մնայ ,
իւր խոռոչութեանը դարման տանելու համար : Բայց
և այնպէս Վերմանիոյ քաղաքային գործոց անսու-
թիւնը իւր հակողութեան ներքեւ կը դնուի միշտ .
հետեւաբար Վերմանիոյ վսեմութեան բայակայութիւնը
քիչ կամ շատ յապաղում պիտի պատճառէ դեսպանա-
կան զանազան բանախօսութեանց , որք սկսուած են :

Բրուսելոյ թագաւորութիւնը՝ որ ըստ պաշտօնական
վիճակագրութեան՝ 1816ին 10 միլիոն 500,000 չափ
բնակիչ ունէր , 1871ին իւր բնակչաց թիւը 25 մի-
լիոնի հասաւ . ըսելէ թէ 55 տարուան մէջ կրկնա-
պատկէն աւելի աճեր է ժողովուրդը : Եւ թէ այս
յաջողութիւնը շարունակուի , տարակոյս չկայ թէ
Բրուսելոն աշխարհիս ամենէն մեծ ու զօրաւոր ազգը
պիտի լինի :

Սպանիայէն հասած լուրերը հակասական են .
քանզի մինչդեռ կառավարութեան կողմանէ տարած-
ուած տեղեկութիւնները՝ ապստամբաց պարտութիւնը
և փախուստը կը ծանուցանեն , միւս կողմանէ կը լսեմք
թէ Տոն Վարլոս երկաթով կը յառաջանայ , իւր զօրաց
թիւը կը շարունակէ և կուսակիցներ կը գտնէ Սպանիոյ
զանազան գաւառաց մէջ : Սորով այն է որ համազ-
գային ցաւալի կոիւր կը շարունակուի այս դժբաղդ
երկրին մէջ , և Տոն Վարլոսի ապստամբական շար-
ժումը թէպէտեւ չկարծուի թէ յաջող վախճան մի
ունենայ , սակայն տարակոյս չկայ թէ ժամանակ մի
պիտի աւելի ի մեծ միաս և ի կործանումն երկրին :

Վարաճախ Սերանոն , որ մտաւր պաշտօնէն
խորհրդոյն նախագահ և պատերազմի տեսուչ կարգե-
ցաւ , ըստ սովորութեան երկուս՝ բոլոր թագաւորին
առջեւ , հաւատարմութեամբ ի գործ դնելու իւր այս
կրկին պաշտօնները :

Վերմանիոյ Վիպեալ Վահանգոյ արտաքին գոր-
ծոց քաղաքականութեան վերաբերեալ գրուածները՝
անցեալները ի պաշտօնէ հրատարակուեցան ըստ սո-
վորութեան : Այս գրութեան մէջ նշանակութեան
արժանի կը համարվի հետեւեալ յօդուածը՝ որ
Լոնկեան խնդրոյն կը վերաբերի : «Այս խնդիրը ,
որ օրրոտօրէ մեծ կարեւորութիւն կը ստանայ , կըսէ ,
բազմաանակ օգուտներ կը պարունակէ , որք կըն-
դարձակուի ի կ . Պիլլոյ կամ լու ևս է ստել ի
Վառապալէ մինչև Շաբոնի թագաւորութեան ջու-
րերը : Մինչև ցայսօր նախանձաւորութեան (րիվա-
լիթէ) պարզ խնդիր մըն էր ի մէջ Ռուսիոյ և Մե-
ծին Բրիտանիոյ . բայց յայտնի է այս խնդրոյն մի-
ջամուս կը լինին ուրիշ երկու զօրաւոր տէրութիւնք ,
այսինքն Վերմանիոն և Վիպեալ Վահանգ . որ
երկուքն ալ իրենց օգուտներն ունին այս խնդրոյն
լուծմանը մասին , և երկուքն ալ Մեծին Բրիտա-
նիոյ անսովորութեան տարբեր տեսութեամբ կը նկատեն
յիշեալ ծանրակշիռ խնդիրը » :

Վերմանիոյ լրագիրները կը ծանուցանեն թէ 1871
ամին վերջին վեց ամսոց մէջ , զաղղիաբէն խօսող եր-
կրներէն հետեւեալ պանդխտութիւններն եղեր են ի
Վիպեալ Վահանգս . Գաղղիայէն 2574 հոգի պան-
դխտացեր են ի Նիւ-Լորթ , Լիսաբոն 2682 և 1 ո-
րէն գաւառէն 662 հոգի : Կետ այսօրիկ Պէրլիայէն
և 1 իւրքեմպէրիէն զաղղիոյնը կը շարունակեն , որոց
թիւը շատ քիչ է : Ընդդիմէն ու Վերմանիայէն ետքը
Չվեյքերիան է որ ամենէն շատ զաղղիականներ յու-
ղարկած է Վերմանիա , այսինքն 4064 հոգի :

Սօֆի արքիպիսկոպիտ :

Այս մեծահամբաւ կայսերացուն տիկինը , որոյ
զմահը զուգարէն մեղ Լարոպիոյ օրագիրները , Լաու-
րիոյ իրանչիսկոս Զովսէփ կայսեր մայրն էր և դուս-
տըր Վաքսիմիլիանոս Լաւրիոյ Պապիէրայի : Դնեալ
էր ի 27 Զունուարի 1805ին և ամուսնացաւ 1824ին
Իրանչիսկոս կարդոս արքիպիսկոսին հետ :

Հագուազիւ տաղանդ և մշակեալ յոյժ միայն ու-
նենալով , այս խելացի տիկինը մեծ ազդեցութիւն
ունեցաւ միշտ կայսերական գերագոտանին մէջ , ինչ-
պէս նաեւ քաղաքային բարձր խորհրդոց մէջ : Բայց
այս ազդեցութիւնը նպատամարտոյ չըլլալով նոր
զաղափարաց , որոնք սակաւ առ սակաւ յառաջ կը
թայն ի ծոց նոյն խի կայսերութեան , Սօֆի արքի-
պիսկոսին ժողովրդեան հակակրութեանը երկակայ
եղաւ յընթաց բազում ամաց :

Լստ մասին՝ այս հակակրութեան պատճառաւ էր
որ իւր լծակցը բարձրագոյնի Իրանչիսկոս կարդոս
արքիպիսկոսը չկրցաւ կայսերական աթոռը բարձրա-
նալ 1848ին յորում իւր եղբայրը Իրեթիան Լաու-
րին կայսրը հրաժարեցաւ ի գահէն առանց զաւակ
ունենալու : Ռուսիոյ շարքեց անոր՝ իւր ծաղկահա-
սակ որդին Իրանչիսկոս Զովսէփ , որ է այժմ տն-
կայսրն Լաուրիոյ :

Լստ ամենայնիւ Սօֆի արքիպիսկոսին հնորհիւ
հակադրութեան (բեաքսիոն) : որ Հուլիոս արքայի
գեղեցիկեան ետեւ տեղի ունեցաւ , կարող եղաւ շարու-
նակ ի գործ դնել իւր ազդեցութիւնը կայսերութե-
նը գործոց մէջ մինչև ի 1859 . յորմէ հետէ կայսրը
հարկադրեցաւ սահմանադրական շաղի մը մէջ մանկ
խաղաղ պատերազմին հետեւանց պատճառաւ :

Կերէր թէ այս ժամանակէ ի վեր արքիպիսկոսին
հետագած էր ի քաղաքականութեան . սակայն բոլոր
լուծիչ զգաւարեցաւ քրտութեան գործոց կարգադրու-
թեանը մասնակցելէ բայց միայն յամին 1866 . այս-
ինքն զինի ձախորդ ճակատամարտին Պաշիմպիի .
քանզի յայնմ հետէ կայսրը կապարկուպէս թող տա-
լով անձնական քաղաքականութիւնը՝ հաստատուե-
մաք ձեռք առաւ ազատասիրական դրութիւնը : Այս
ժամանակէ ի վեր Սօֆի արքիպիսկոսին սկսաւ խիստ
առանձնական կեանք վարել . մանաւանդ որ իւր ա-
ռողջութիւնը շատ տկարացած էր զինի ցաւալի վախ-
ճանին իւր երկրորդ որդւոյն՝ Վաքսիմիլիանոս կայ-
սեր , զոր կաթոյն կը սիրէր :

ԱԶԳԱՅԻՆ

Յայտնի է բարեւեր հասարակութեան Սոյ կու-
թողիկոսական խնդիրը , որոյ գէտ ամենայն Հայոց
վեհափառ Վեդիկ Վ . սրբաշնորհոյն Հայրապետը
բողոքեց , առանց Լաւրիանայ Ս . Սիւրբին մասնակ-
ցութեանը և առանց իւր բարձր հաւանութեանը
լուծուելուն համար :

Հետեւեալ նամակը (1) , զոր կ . Պիլլոյ սրբապա-
պարհաբքը՝ հանդերձ ազգային քաղաքական լու-
ղովոյն անգամ , Սարտի 10 ամսաթուով դրած է
Նորին վեհա . Սրբաշնորհութեանը ի Ս . Լաւրիանայ ,
յիշեալ խնդրոյն վրայօք կարեւոր բացատրութիւններ
կուտայ . զորս արժան կը համարվի մեր հետաւոր ըն-
թերցողաց աչաց ներքեւ դնելով՝ անոնց ողջամիտ դա-
տողութեանը յանձնել :

(1) Կրփափաքիկն որ այս նամակը գրաբար լեզուա-
գրութեան լինէր . քանզի երբ Պատրիարք մը առ վեհա .
կարողիկոսն ուղղեալ գրութիւններն աշխարհաբար
լինին , ուրիշ լինէր առօրին , ուրեմն , պիտի գործածուի
մեր պարզ գրաբար պատուական լեզուն . որում , ա-
մսեմաղձաբար , ման կըստաւանայ այս ոչ ազ-
գասիրական սովորութիւնը :

Վեհափառ և Աստուածաբան Հայրապետ .

Մինչդեռ Արևիկոյ կաթողիկոսական վեհին առթիւ ծագած վեց տարուան կնճառայի խնդրոյն յաջողութեամբ լրանալուն , և ընդարձակ վիճակ մը խաղաղութիւն , մանաւանդ Հայաստանեայց եկեղեցւոյ միութեան և ամբողջութեան սպառնացող վտանգին անհետեւուն վրայ՝ Հայաստանեայց ուղղափառ եկեղեցւոյ հարազատ որդիք կրբեր կրէին , և խառար ժամանակներու արդիւնքն եղող դաշարեալ յարաբերութեանց վերահաստատութեան սկզբնաորութեան ժամը հասած կընկատէին , և Ազգային Վարչութիւնն յատենի անդ ընդհանուր ժողովոյ կը յայտարարէր թէ յարաբերութեանց խնդրոյն մէջ Ս . Էջմիածնի ամենայն Հայոց վեհափառ կաթողիկոսին հետ պիտի բանակցուի և ըստ այնմ՝ միաբան հաւանութեամբ պիտի կարգադրուի , յանակնկալ կըհասնի առ Պատրիարքն Կ . Պօղոս Զերդ Վեհափառութեան մէկ հետագիւրը , որով եղած ընտրութենէն դժգոհ՝ կըգանգատի Կ . Պօղոս ընդհանուր ժողովէն , իբրեւ թէ իւր ձեռնհասութենէն վեր խնդրոյ միջամտելու եղած լինէր , և ապա՝ գոյնն համար զգուշութեան հրաւեր կըկարգար Ս . Հարցաւանդութիւններէն չխոտորելու :

Թէպէտեւ պատրիարքական հեռագիր մը անմիջապէս տպահովեց թէ խնդիրն բոլորովին իւր նպատակին հաւանակ մեկնուած է Զերդ վեհափառութեան , և մինչդեռ կըպատրաստուէր կանխառ եղած որոշման համեմատայն կաթողիկոսական կնճառայի խնդրոյն օրինաւորապէս լուծման և տպագրելուն մէջ վերստին չկարենալ ծագելուն համար , պէտք եղած կարգադրութեան բոլոր հանգամանքները ի միասին ամփոփեալ ընդարձակ տեղեկագիր մը ներկայացնել Վեհիդ , ահա՛ Ս . Էջմիածնի Արարատ ամառաբնակի Կեկեղեցիք ամսոյ թիւը կըհասնի , և այս խնդրոյն վրայ յատկապէս դրուած յաւանածի մը , նոյնպէս և առ նորընտիր կաթողիկոսն Կ . Մկրտիչ ուղղեալ կոնդակին մէջ այնպիսի ակնարկութիւններ թէ՛ առ Կեղերոսական վարչութիւն և թէ՛ առ Ազգ . ընդհանուր ժողովն կապարտեալէին , որոյ գէժամանաւոր է ազգային Վարչութեան լուել , և կըբխակայ յաւանաւորութեան մէջ , որոյ պարտութեանց պէժ որ կրցեր են մինչև առ Զեղ հասնիլ , և յայտնել Զերդ Վեհափառութեան մեր օրակն ցաւերը , իբրեւ որդի առ Հայրն իւր :

Այո , վեհափառ Տէր , ազգային վարչութիւնն պէտք կըհամարի մեթեւ իւր բոլոր գործութեամբը պա և խառարաւանք բառերը , զորոնք ոչ որ իրաւունք ունի գործածել վարչութեան անօրինութեանց և ևրձաբոխ անուանալով շարժանքը համար . բողոքել այնպիսի գործարարութեանց պէժ որոնց ցաւալի ազդեցութիւնը միայն կրցած է պատճառ ըլլալ այն ոգւոյն ու ձեւերուն որ առաջին անգամ մուտ կըգտնեն համազգային ամբողջութեան գրութեանց մէջ . այդ պարտութեանց պէժ կըսենք , ազգային վարչութիւնն բաւական կըհա աշի ներկայացնել վեհափառութեանը եղելութիւնն իւր բոլոր պարզութեան մէջ :

Վեց տարիէ ի վեր Կ . Պօղոս Կեղերոսական վարչութեան գայթ ի գայթ միջակը , Սահմանադրութեան անժամանակ դադարումն և Պատրիարքական խնդիրները հետզհետէ ծանրանալով՝ չերթէ պատահութիւնն և միջոց տալիս Արևիկոյ ինչպէս նաև Աղթամարայ վճարայնոց կաթողիկոսական խնդիրն ըստ արժանոյն նկատողութեան առնել , և որ աւելի ցաւալին է Արևիկոյ ինքնընտիր և անվաւեր կաթողիկոսն Արևիկոյ՝ Կեղերոսական վարչութեան անկերպարան վիճակէն օգուտ դադարելով յաջողած էր երթալ ի Սիւս և անվաւեր ձեռնարկութիւններ ընելով՝ ժողովուրդն ի գայթակղեցնել , ազգը պարտեալ և հազարաւոր Հայ ընտանիք հոգն որսալիս ի կրթութեան մատենէ : Ահա ազգային Վարչութիւնն այսպիսի վիճակի մը մէջ գտաւ Արևիկոյ կաթողիկոսական խնդիրն ու թէմը , երբ պաշտօնի կոչուեցաւ :

Երթալով ծանր կերպարանք առած և Հայաստանեայց եկեղեցւոյ միութեան և ամբողջութեան սպառնացող այս ծանրակիւն խնդրոյն մէջ , Ազգային վարչութիւնն պարծառք կըհամարձակի ըսել թէ արժանի քաջութեամբ և նախանձախնդրութեամբ վարուեցաւ : Արևիկոս ինքզինքը անկախ աթոռ մը կընկատէր մինչև հիմա և վտանգն այդ անկախութեան մէջ էր . հիմա Պօղոս Կեղերոսական վարչութեան նմարկեցաւ . Պօղոս որ Էջմիածնոյ թեմին է : Սիւսէ ահա այն առաջին և մեծ արդիւնքը՝ զոր ձեռք բերելու համար շատ դժուարութիւններու հանդիպեցաւ , և վերջապէս յաջողեցաւ (վիճակային համագումար ժողովոյ) իւր դատը յաղթող ընելու օսմանեան բարեկոնում տէրութեան առջև , յաջողեցաւ վիճակային համագումար ժողովոյ տուած և երեսփոխանական ժողովոյ 1866 Յուլի 22ին հաստատած վճիռը գործադրել տալ յանձին

Արևիկոսոյն , որ շատ ջանաց ընդգլեւ Կեղերոսական վարչութեան իրաւասութենէ , անկախ երթադրելով զինքն Ս . Էջմիածնի կաթողիկոսական իշխանութենէն և նորոտ փոխանորդական պաշտօնէութենէն : Արևիկոսոս Կաթողիկոս Ծանփանութեան միջոցաւ բերուեցաւ Սիւսէն և արտոբեցաւ յԱրարատ :

Անմիջապէս Արևիկոյ կաթողիկոսութեան համար նոր ընտրութեան ձեռնարկուելով՝ Վարչութեան կողմէն չէ գերա . Սիւսէն եպիսկոպոս և Յրէնկեան Յովհաննէս Լիւնտի տեսնու ի նշանակուեցան , և անցեալ Նոյեմբերի մէջ կաթողիկոսական ընտրութիւնը թեմական ընդհանուր ժողովոյն միջոցաւ կատարուելով՝ Տ . Տ . Մկրտիչ սրբազան արքեպիսկոպոսը Արևիկոյ վիճակին կաթողիկոս ընտրուեցաւ , որ և կեղերոսական ընդհանուր ժողովոյ Լ . Պ . Նիսիսի տեսնադրութենէն , միայն չորս երեսփոխան ընդգլխացան Սոյ կաթողիկոսին ընտրութեան վաւարայններ , առարկելով թէ նախ յարաբերութիւնը սկստը էին հաստատուել Սահային Ազգային վարչութեան և Կ . կոլիւնի նշանակելով որ յարաբերութեանց խնդիրը երկար բանակցութեանց պէտք ունի , և Արևիկոյ թեմականաց անհնար պիտի ըլլայ այլ ևս հանդուր . մէկ իրենց կաթողիկոսական խնդրոյն առ կախ մնալուն , յարաբերութեան մասին Սոյ նորընտիր կաթողիկոսին կանխառ ընդունելութեան խոստովագրութեանը , նախ վտերացումն առաջարկելով Բնդհանուր ժողովին , որ պէտքի Արևիկոյ յաջեալ և տառանկալ միջակը հանգարտեցն ետը , ընդհանուր յարաբերութեանց գործին ձեռնարկուի , և ժամանակ ու միջոց ըլլայ արդէն սկսուած այն գործին վրայ Զերդ Վեհափառութեան հետ բանակցելու : Տարակից չիայ թէ Զերդ Վեհափառութեան առ ընդհանուր խնդիրն անհնար և անկարելի ընդունալով նոյն նախ անտեսադրութիւնը պիտի համոզուի թէ իւր ձեռքն անհնար է ընդգլխալ իւր մասին երկիւղն , ըստարուած թէ՛ Ազգային վարչութեան և թէ՛ Կրթութեան խոսնակուն ժողովոյ հետ որ յարաբերութիւնը Արևիկոյ կաթողիկոսի կողմէն ընդունուած կըհամարուին . վասն զի այն օրը երբ Արևիկոյ կաթողիկոսն իւր խոստովագրութեանը պիտի և տաճանէ յարաբերութիւնը չընդունի և կամ նոյն պէժ վարչութիւն , անտարակոյս ամբաստանութեան տակ կիցնայ և ի պահէն ճշմարտութեան անդամ կըգործի իւր պաշտօնին :

Զեմք յուսար թէ Զերդ Վեհափառութիւնը համաշուած ըլլայ որ Սոյ կաթողիկոսին վտերացումն Ազգային ընդհանուր ժողովին ընդգլխով Սիւս բարձրացած համարուի , վասնզի Զերդ Վեհափառութիւնը զիտը արդէն թէ ոչ միայն վտերացումն , այլ և ընտրութիւնն անգամ Բնդհանուր ժողովին պիտի կատարուէր ըստ 1866 Յուլի 22ի որոշման վիճակային համագումար ժողովոյ և Ազգային ընդհանուր ժողովոյ , բայց որովհետեւ առնեն անցնելով վանագան նորանոր դէպքեր խնդրոյն վիճակը կըբարդանալով ինչպէս ըստ , Վարչութիւնն իսկոյն կանխադրուելով համար պատշաճ դատեց այն որոշումն գործադրել յառաջ , անցեալ տարի միանգամ ևս Բնդհանուր ժողովոյ տեսնելու հանել , որ վեց եթին նիստ չաւորուի պարզել և խնդրոյն ամեն կէտերը կատարեալ տալարութեամբ քննել ետեւ , որոնց ընտրութիւնը գաւառին տալ և վտերացումն կեղերոսին վերապահել և այն ալ Բնդհանուր ժողովով : Ուստի անոնք որ Սոյ կաթողիկոսը զատ գլուխ և Սոյ ժողովորդը զատ մարմին չնկատելու երկիւղով , ընտրութիւնն ալ Սոյ վիճակայնոց ջրոյցած ընտրելեաց ցանկի մը վրայ Բնդհանուր ժողովով ընել կ'ողկին , վաւերացմամբ ալ նոյն ապահովութիւնը ձեռք բերած համարեցին . վասնզի Բնդհանուր ժողովով ըլլալիս ամեն տնօրէնութիւն միշտ ժողովողեան և ընդհանուր ազգին համար ապահովութեան միջոցները բնականաբար իր հետն ունի և ո՛րեւէ երկիւղի կամ կասկածի տեղի չմնար : Ապագային մէջ ալ այն խնդիրն իւր վտանգաւոր դիրքը կրուտած է , վաւերացումն Բնդհանուր ժողովոյ վերապահուած լինելով , որ ըսել է Բնդհանուր Թուրքիայի Հայոց գիտութեամբ և ժողովողեան աշացն առջև անօրինելի խնդիր մ'է . այն ժողովողեան՝ որ տէր է Աթոռոց և պահապան անդնց իրաւասութեան :

Զեմք յուսար նաև թէ Զերդ Վեհափառութիւնն համա միտ գտնուի այն կարծեաց թէ՛ թոյլ տալու էր սանցւոյ որ ինքնագլուխ ընտրէին իրենց կաթողիկոսն և վաւերացնել տային , այս ըսողները չեմք դիտել թէ ինչ միջոց ունէին իրենց ձեռքը՝ ապագային մէջ վտանգի տակ չի ձգելու Հայաստանեայց եկեղեցւոյ միութեանն ու ամբողջութիւնը , մինչդեռ Արևիկոսոս և իւր կուսակիցներն ալ միեւնոյն միջոցով կըջանային ճողովորդ Արևիկոսական

վարչութեան իրաւասութիւններէն :

ՍԱԶԵՐ Վեհափառութիւնը կըգանգատի թէ ինչո՞ւ ի Ս . Էջմիածնի ձեռնադրեալ եպիսկոպոս մը Սոյ կաթողիկոս կընտրուի : Այս մասին ի բաց առեալ ամենայն պատճառաբանութիւնը , անշուշտ Զերդ Վեհափառութեան ուշադրութենէն վրիպած են նաև՝ վիճակային համագումար ժողովոյ Սոյ և Աղթամարայ համար պատրաստած կաթողիկոսական ընտրելեաց ցանկերը , յորս անխտիր Հայաստանեայց եկեղեցւոյ եպիսկոպոսներ և վարդապետք ընտրելի ներկայացեալ էին , ինչպէս սուրբ Էջմիածնի ձեռնադրեալ Արիստակէս եպիսկոպոսը Սոյ Աթոռոյն համար և Թովմա Գեան Յակովբ եպիսկոպոսը Աղթամարայ Աթոռոյն համար , և Զերդ Վեհափառութիւնը մինչդեռ ի Պօղոս , ոչ միայն տոնոյ վրայ գիտութիւն մը չըրաւ , այլ նաև յիտ ընդունելոյ պաշտօնապէս սոյն երկու աթոռոց ընդ մայր աթոռոյ յարաբերութեանց ծրագրել , որ եկեղեցւոյն Յանձնաժողովով մը պատրաստուած էր , և որուն մէջ յայտնի դրուած էր թէ Սոյ աթոռոյն վրայ Աղթամարէնց գերաւորանին ունեցած ժառանգական իրաւունքը ազդեցին ջնջուած և արժանաւորաց և եթ պահուած է , երբէք չմերժեց այս սկզբունքը :

Արդ՝ յայտնի կերելի ներկայ բացատրութիւններէն , որ ազգային Վարչութիւնն , ինչպէս նաև Կ . Պօղոս ազգային երեսփոխանական ժողովը , ոչ թէ մեղանշած է Ս . Էջմիածնի մայր Աթոռոյ իրաւանքը դէմ , ընդհակառակը անոր գերագահութիւնը պահպանելով՝ Հայաստանեայց Ս . Եկեղեցւոյ միութեան և ամբողջութեան սպառնացող վտանգին առջին առած և Սոյ անկախութիւնը սպառնացող դիրքը օրինաւոր ասհմանի տակ մայնելով ապագային իսկ ապահովելու յաջողած է : Մեր նախորդ պաշտօնակիցները Սոյ և Աղթամարայ վիճակները Զերդ Վեհափառութեան իբրեւ ընդհանրական կաթողիկոսի ընտրութեան մասնակցել տալով մեծ քայլափոխ մ'առնել տուած էին եկեղեցւոյ միութեան ապացոյցներ . Արևիկոյ թեմականը զայն առաւել պարզեցին ի Ս . Էջմիածնի ձեռնադրեալ եպիսկոպոս մը անխտիրութեամբ իրենց թեմին կաթողիկոս ընտրելով , զոր նա իրաւորեց ազգային երեսփոխանական ժողովով՝ այդ ընտրութիւնը վաւերացնելով , որ Հայաստանեայց մի՛ սուրբ և Առաքելական եկեղեցւոյ ամբողջութեանը յաւանական վիսյութիւնն է :

Այսք՝ որովհետեւ ազգային Վարչութիւնն ապահով է թէ Զերդ Վեհափառութիւնը ներկայ յայտադիր կարգաւ , և Բնդհանուր ժողովոյ տեսնադրութիւններն ալ ուշադրութեան առնելու բարեհաճել ետը , բացայայտ պիտի անանք թէ ինչ է այն ոգւոյն շարժառիթն որ քանի տարիէ ի վեր փորագրոյն առթիւ մը չըտանցեն Կեղերոսական վարչութիւնն անդադար գրպարտելու , իւր բոլոր ազգագուտ մտածութիւնները շարաշար մնկնելով և որ ամենէն քառմեկին է նոյն իսկ Զերդ Վեհափառութիւնը խաբելու յանգցնելով . . . աւելորդ կըհամարվի այլ ևս երկարել այս մասին վրայ :

Գաւով յարաբերութեանց խնդրոյն , Արդ . վարչութիւնը մեծ ցաւօք կըխոտորուանի թէ իւր կաթողիկոսն առաջին օրէն պարտաւոր էր սոյն խնդրոյն միջամտել , բայց չիրացաւ , և պատճառն ալ յայտնի է արդէն : 1866 է ապա Սոյ Ազգային վարչութեան խանգարեալ վիճակէն պատճառեալ այնչափ ազգային գործեր և խնդիրներ կա , յին զիլեալ , և մանաւանդ Արևիկոսոսի պատճառ և ազգաւորածան խորհրդոց և ջանին զէջն առնելու այնչափ գրաւեալ էր , որ առանց զայն կարգադրելու մեծամեծ արդեւքներ կային յարաբերութեանց խնդրոյն ձեռնարկութեանը . միւս կողմէն մեծ յոյս ունէր որ Զերդ Վեհափառութիւնը ըստ առաջարկութեան Աղթամար Երեսփոխանական ժողովոյ որ ի 1867 Պետրովար , և ըստ հանգիստար խոստման և ուստի Զերդ Վեհափառութեան ի սուրբ Երրորդութեան եկեղեցւոյ ի Բերա , ձեռնարկած է արդէն Մայր Աթոռոյ Հայրապետական անկախութեան և կաթողիկոսական իրաւասութեան վերա հաստատութեան գործին , այն է ջնջելու Պաշտօնէի անուն կարգադրութեան այն մասերը , որոնք կաթողիկոսի ընդհանրական պաշտօնին կըկերպրեն , և զկողմէն հակառակ են մեր սուրբ և ուղղափառ եկեղեցւոյ կոնստան և աւանդութեանց : Ուստի կըստաւոր Զերդ Վեհափառութեան ստանալ այս մասին յաջող և բերկրութիւնը :

Ահա այժմ՝ ուրախութեամբ կըտեսնենք որ մեր յոյսն ի դերեւ չէ եղած , զի Զերդ Վեհափառութիւնը Սոյ կաթողիկոսական խնդրոյն առթիւ կըբանայ սոյն յարաբերութեանց խնդիրը , և իւր հեռագրին մէջ կըհամոզեցանք թէ իւր նախագահութեամբ զուարեալ եկեղեցւոյ

Այս պատմութեան մէջ կը տեսնուի Կալիֆօրնիոյ մէջ
ծառարարական Զայ Կառնապիտան պարտն ԱՆԻՍ Արգարեան
նի վիճակը պատկերը . որուն նորիւրէն է մասնակց
տղապարտութիւնը հետեւեալ կերպով .

Ի Յիշատակ

Մեծահարաւ տանն Արգարեան որ 'ի Հոգիկոյ, նորիւ
րէ գերանեմար և աղեղական պարտն ԱՆԻՍ Արգարեան
րոյ , շնորհապարտ և յարգական զոյժամբք ուզոյ ,

Առաւելական ամբողջ Երեսօղակի Պատրիարք
ԵՍԱՅԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

—Մի և նոյն Ժամանակագրութիւնը տպուած է նաև
արդոյ Յակոբեանց տպարանին մէջ, տարբեր գրչապրէ
հանելով և տառնոց ընդարձակ ծանօթութեանց :

Կրօնամտի 'ի գրատունն սուրբ Յակոբայ վանոց և
Երեսօղակատունն Կ. Պօլսոյ : Առաջնոյն գինը՝ 16
գրուր է : Իսկ երկրորդինը՝ 12 գրուր է :

Փ Ս Ի Ն Ձ

Այս պատմական զարգացեալ յարգոյ Տնօրէն
և Տնօրէն ըստ խնդրոյ եւ քաջաբերական բազմաց ,
սկսած է փոքրաբերք օրագիր մըն ալ հրատարակել ա-
մեն օր, որուն բաժանորդութեան գինը վասն 100 օրուոց
մէկ մեծիկովն է Կ. Պօլսոյ համար , եւ 30 դուրուոց գա-
ւառաց համար՝ ազատ 'ի ծախսոց քրդատարութեան :

Այս աւանդ զինք՝ յուսամբ քե պիտի յորդորէ գաւառ-
ական ազգային մեր բաժանորդ գրուիլ յիշեալ օրա-
գրոյն . յորմէ պիտի տեղեկանան Կ. Պօլսոյ եւ ուրիշ
ամեն օրուան յորերուն :

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԻՔԻ

Զմիւռնիա , 3 Յունիս :

Ինչպէս յայտնի է , կայսերական հրովարտակաւ
Այսօրնի վիճակներն կուտակալութիւնը փոխմա . Սա-
աւրք փաշային յանձնուեցաւ . և որովհետեւ անոր
մարդասէր , խոհական և բարեխնամ կառավարչութիւն-
ընդհանր վայելած են նահանգիս բնակիչքը , ուստի
հասարակութեան ուրախութիւնը և զոհուածութիւնը
մեծ եղաւ վեհա . Սուլթանին այս նոր անօրէնութիւնը
իմանալով : 'Եւրոյն վ սեմութիւնը ' անցեալ ամսոյ
27ին շարժ օրը հասաւ 'ի քաղաքս Խաչիլ անուն
կայսերական շողեռաւով և լծողտնօթաց արձակմամբ
փառաւորապէս և բազում սիրով ընդունուեցաւ նա .
հանգիստ զննուորական , քաղաքական և կրօնական
գլխաւոր պաշտօնատարներէն :

Երեքշաբթի օրը՝ 'ի ներկայութեան յիշեալ պաշ-
տօնատարաց և հիւպատոսարարաց առաջին լծարդման
ներուն , հանգիստաւ կերպիւ կարողացուեցաւ կայսե-
րական հրովարտակը , որով վստմափայլ Սաաւրք փա-
շան Այսօրնի վիճակներն ընդհանուր կառավարիչ
կարգուած է :

Օտար տէրութեանց հիւպատոսները , շորեքշաբթի
օրը իրենց պաշտօնական այցելութիւնները ըրին 'Կ.
վ սեմութեանը . որ իւր սովորական մարդասիրու-
թեամբ բազում մեծարանօք ընկալաւ զնոսա :

—Մեր նախորդ կուտակալ վստմա . Համալի փա-
շան , որուն Երեսօղակն նահանգիս ընդհանուր կա-
ռավարչի բարձր պաշտօնը յանձնուեցաւ , ելիւնշար-
թի օրը կայսերական Խաչիլ շողեռաւով մեկնեցաւ
'ի Կ. Պօլսոյ երթալու . ուր քանի մը օր մնայէ ետեւ
իւր նոր պաշտօնատեղին պիտի երթայ :

—Ընցեալ ամսոյ 25ին հինգշաբթի օրը Սեփիւ
Բերտանիոյ վեհա . վ իբրեւորիա լծարդուհայն ծննդեան
54երորդ տարեգարձը սովորական հանդիսիւ տօնա-
խմբեցաւ 'ի հիւպատոսարանն քաղաքիս , ուր հրաւիր-
եալ ներկայ էին անդղեղայի զլսաւոր բնակիչք իդ-
միրի , ինչպէս նաև ուրիշ պատուաւոր անձինք . Մե-
ծաշաբթի փետր Բ. վ . Քենդեղեղեճ հիւպատոսը , որ
մարդասէր և առաքինի պաշտօնատար մըն է , պարա-
կայիս յարմար համաժողով տանեալստութեամբ մի ա-
ռաջաբեկեց 'ի կենդանութիւն շնորհալի լծարդուհայն
ընկել զբաժակն շահբաշխայի , որ մեծարուած էր
հանգիստականաց , որուն հետեւեցաւ Ընդղեղայ ազգային
երկը հանգեթմ նուազարանաւ :

Մեծարդոյ Տնօրէն Էֆենտին ներկայ էր այս հան-
դիսին 'ի կողմանէ տեղական իշխանութեան :

Օգոստոս . վ իբրեւորիա լծարդուհայն ամսոյ 8—20ին
լման 35 տարի գահակալութիւն ըրած պիտի ըլլայ :

—Ընդղեղայ կառավարութիւնը անցեալները 500.000
ֆրանք վարձատրութիւն շնորհեց փետր Հիւրիլէ ա-

նուն մեքենագործին , որ յաջողեցաւ հնար մի գտնե-
լու , որով 1 օքտոմբրիներուն ընթացքը 'ի վայրկեանի
կրնայ արգելուիլ :

—Կը հաստատեն թէ մօտիւ տը Պիսմարք իշխանին
եղբորորդին՝ Ընկուտ տը Պիսմարք—Շէնհաուսէն
կոմսը մօտեցաւ պիտի ամուսնանայ 'Կէր Ընկենդալի
օրիորդին հետ , որ Մոսկուայի մեծահարուստ սեղա-
նաւորի մը դուստրն է :

—Ընթերցեալ կը պահեն թէ Ընթերցանդիոյ մէջ հաս-
տատու շէնքէնական նոր գրամանոցին ընկերական
գրամալուծիւր 50 միլիոն ֆրանքի հասած է . և կը
յաւելուն թէ՝ շատ հաւանական է որ այս դուստրը
եւ առաւել աճի , ինչու որ ընկերութեան բաժիններ
ըր մեծապէս կը փնտռուին :

—Ընթերցեալ Զայոց վեհափառ կաթողիկոսը 'ի պա-
տանաւորի Կ. Պօլսոյ Ս. Պատրիարքին գրութեանը
զոր հրատարակած եմք ներկայ թուոյս մէջ , Ընդղիլի
28 ամսաթիւով ընդարձակ և օրինաւոր յոյժ կոնդակ
մի յաղարկած է դարբար լեզուաւ . զոր լրագրոյս
յաջորդ լծուով պիտի հաղորդենք մեր ողջամիտ ըն-
թերցողաց , անոնց ծանր ուշադրութեանը յանձնե-
լով զպարտականութիւնն յիշեալ կոնդակին :

—Սուրբութեամբ կը տեսնենք թէ Մանչուսի
Լիֆօնս , Ընթերցեալ և Օրգիլ անուն ազգային թեր-
թերը , որ Բարձրագոյն Գրան հրամանաւ գաղարած
էին , սկսան վերստին հրատարակուիլ 'ի Կ. Պօլսոյ :

—Իզմիրի ծխախոտին միջաւաճաւութիւնը , լրած-
նուն նայելով , քիւր Լէոնիտա Պալմաճի յոյն սե-
ղանաւորին տրուեց է հինգ տարուան համար 150.000
լիւայի , զոր պիտի վճարէ կայսերական զանձուն ,
տարին 30.000 լիւա հասուցանելով :

—Ընթերցանդիոյ Յունաց Պատրիարք ամենապա-
տիւ տէր Սօֆրոնիոս սրբազան արքեպիսկոպոսը երէկ
աւսարիական շողեռաւով հասաւ 'ի քաղաքս , ուր
քանի մը օր մնայէ ետեւ 'ի Կ. Պօլսոյ պիտի երթայ :
'Եւրոյն Սրբաղլուսիւնը եկեղեցական մեծ փառաւո-
րութեամբ ընդունուեցաւ :

—Յիշեալ Պատրիարքին՝ շողեռաւէն 'ի յամաքն
ելիլ տեսնելու համար խուռն բազմութիւն 'ի ծովե-
ղերեայ արձանաց մի ժողովուած էին՝ երբ ծովուն վե-
րայ յառնուած անոր շէնքը յանկարծ փլուեցաւ և բաղ-
մալիւ անձինք ծովը ինկան . անոնցմէ շատերը վե-
րաւորուեցան , այլ բարեբաղդարար խղիւղող չեղաւ :

—Կրօնի թէ Օտեսայի մէջ քուլեթայի հիւանդու-
թիւնը վերստին երան ելեր է , և Սեփիւն հա-
սած նաեւ երբ քառանդինա պիտի ընեն 'ի Կ. Պօլսոյ :

ԱՌՆԵՏՐԱԿԱՆ

Ըփօնին գիները անակնկալ կերպիւ բարձրացան
այս շաբթու և 60 կողմի չափ վաճառեցան 153—154
և 157 դուրուշն 'Կարահիսարը . իսկ երէկ կոչուած
պատուական աֆիօնը 164 դուրուշն ծախուեցաւ չե-
քին : Սակայն վերջէն գարձեալ 153ի իջաւ . Սեփ
չուկային մէջ 600 կողմիէն աւելի անվաճառ աֆիօն
կրգանուի այժմ :

Բաժակալը գիւրաւաճառ է միշտ , և այսօրուան առ-
ժէքն են 555—575 Սօպուճան , 520—550 Բըբաղա-
ճը , և 460—470 զուրուշ կենդինարը Ըտանան :

Բեօքայոյն կուգուի . և 300—340 զուրուշն կեն-
դինարը գիւրաւաճառ է :

ԾԱՆՈԹՅՈՒՆ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Իզմիրի քարափանց (քիլո) :

Իմոյ կըտորուի հասարակութեան թէ Մայիսի 29ին ,
այսինքն ըստ ֆրանկաց Յունիսի 10էն քարափանց (քիլոն)
որոշեալ տարրը սկսաւ տանուիլ չինուած առաջին ըստ-
նին վերայ . որ է հին թուականցին , մինչև կայսերական
ձմեռանոցը (բըլան) :

Ի զիմոյ

Իզմիրի քարափանց ընկերութեան ,

Իզմիր 4—13 ,

Մատակարար—Տնօրէնը

Յունիս 1872

Բ. Ժ. Վանիկեք :

LA VELOUTINE.

ԼԱ ՎԵԼՈՒՆԻՆ կոչուած բրնձի փոշին (բուտ-
րա) , որուն պատուականութիւնը կատարելապէս
փորձուած եւ ճանցուած է շատ տարիներէ 'ի վեր ,

մարքասի կամ պիսմիսք անուանեալ տեսակ մի սպի-
տակ հանքով պատրաստուած ըլլալով , մարդոյս մոր-
թոյն վերայ օգտակար ազդեցութիւն կընէ : Այս ճերմակ
փոշին՝ որ կայուն (եալիւրգան) է եւ ցրեք ամենեւին
աչքի ջրանուիր , մարդոյս մարմնոյն բարմութիւն
եւ հետեւաբար կալիւրիսին մի կուտայ :

Այս պատուական փոշին Փարիզի մէջ Լա Բեկուս-
ուստ փողոցը Ե. Ֆար փոմատաճիին քով , իսկ
ուրիշ քաղաքները ամեն փոմատաճիներու եւ Ֆրեմկ
սպիրիտներու քով կը գտնուի :

ԳԻՒՆԳԻՆ ԲԱՐԵԿԱՄԸ



ԳԵՂԱՏԻՍՏ ԶԱԼԼՈՒԹԻՒՆ

ԶԱԼԱՅԻՆ ԼԻՒԱՆԳՈՒԹԻՒՆԻՒՄ

Մարդոյս ջղալին դուրսէն (Էֆէթ) շատ յոգնած ըլլալը
սովորաբար անու մըն է և ջիւղեւուն ամենափոքրիկ շարժումը կամ գր-
գռութիւնը վշտալի է յոյժ . վասն զի ուր գտնուելու է անոր գե-
ղը : —Միակ դեղը այս է . քիչ խմէ գինի , գարեջուր , և ոգե-
ւոյ ըմպելիք . և աւելի աղէկ կըլլայ որ բոլորովին հեռանաւ ա-
նոցմէ , և ամենեւին չխմու . նմանապէս խափէ մի խմուր , և ան-
տեղ թեթեւ թեւոյ (Էֆէթ) գոհ եղիք : Կարելի եղածին չափ մա-
քուր օդ ծծէ ամեն գիշեր իմ դեղահատերէս երեք կամ չորս հատ
կըլլէ , շատ միտ կերէ համեմունք (Էֆէթ) հեռի կեցիք : Եթէ
այս օգտակար կանոնները ճշգրտեմք 'ի դորձ գնելու ըլլաւ ,
միտք չուտով պիտի հանգստանայ , մարմնիդ առողջ պիտի ըլլայ և
պիտի մոռնաս թէ ջղաց շարժումն ունեցար :

ԼԱԿԱՐԳՈՒԹԻՒՆԻՒՄ ԵՐԻԿԱՄԱՆՑ

Այս գործարանաց վերաբերեալ ամեն հիւանդութեանց մէջ
թէ կըլլանք շափելու աւելի ջրալից կըլլան կամ բաւական չեն ըլ-
լար , թէ բարձր կամ աւելի երկիւրանց կը համին կամ թէ ա-
նոց մէջցաւեր կը գոյանան մէջքին համապատասխանած մասը , Այս
ամեն հիւանդութեանց ժամանակը պէտք է Հոլ օուէի դեղահատե-
րը ամեն Լ տարեւ հրահանգը համեմատ և անոր պէշտանիով չը-
վելէ երկիւրանց վարի կողմը անկողին մանկու ժամանակը : Այս
գործարան անմիջական օդունութիւն մի պիտի մատուցանէ , այնինչ ու-
րիշ դեղերը դուր տեղը գործածուած պիտի ըլլան :

ՍՏԱՄԻՔՍԻ ԼԱԿՈՒԹԻՒՆ

Սեփ և Է դեղ մի չկրնար ստամոքսի գործութիւնը նորոգել և
աղեկելով զայն չուտով՝ ինչպէս այս դեղահատերը . որոնք անբարե-
խառնութեան կամ վատթար կերակուրէ պատճառաւ ըրող թեր-
ւութիւնը կըլլան և կը հասնին 'ի Լեարդն (Էֆէթ) : ո-
րուն գործողութիւնը կը կարգադրեն . ինչպէս ստամոքի ձգտման
(Էֆէթ) դեղերու մէջ պարանիւն ներգործութիւն մի ունի և լեարդի
ու ստամոքսի ամեն անկարգութիւնները միշտ կը լծեն :

ԲՈՐԲՈՒՄՆ ԹՈՒԼՈՒՄԻՑ (Դոնէթ) ՀԱՐ ԵՒ
ՀԱՐԲՈՒՂԻՍ

Հիւանդութեան վերաբերեալ գործարանաց հիւանդութեանց
ամեն ախտէն աւելի յաճախ կը պատահի և երբեմն աւելի վտան-
գաւոր է : Անոց գործողութեանց անկարգ ընթացքին տառաջնու-
թեանը կրնան միշտ կարգադրուիլ Հոլ օուէի հոգեւոր դեղա-
հատից միջոցաւ : Ասոր շուտով կը գործունեն արեան մը և Է տա-
ժամանակաւ անշարժութիւնը , կը թեթեւանայ արեանը շնչաբանե-
րը , կը արեւաւանն շնչառութեան սաստիկ արագութեամբ և կա-
րողութիւնը կրնաւ անշարժութեան և թերեւոր գիւրաւաճառ և կա-
նոնաւորուած գործելու : Այս դեղահատերը՝ իրենց մարդողական
գործութեամբ կը սրբեն արեան ամեն ազդեղութիւններէն , և այս
եղանակաւ կը գործանեն զգրութիւնը (Էֆէթ) ընդդէմ՝ ծխախոտ
խախտ , շնչաբանութեան , և ուրիշ լծարդոյն տկարութեանց :

ՏԿԱՐԱՑԵԱԼ ՄԱՐԳԻՆԱՅԻՆ ԲԱԿԱՑՈՒԹԻՒՆԻՒՄ

Տկարութեան , թուլութեան և ջղացաւութեան դեղաբերու-
մէջ , որոնք որ և է բնական կամ գերբնական չափաւորութեան յա-
ռաջ եկած են , այս դեղահատից պաշտը և նորոգիչ ներգործու-
թիւնը մեծապէս օգտակար է . քանզի մարդողութիւնը կը վերահաս-
տատու , մարմնոյն ամեն հիւանդութեանը կը կանոնաւորէ , ջղալին
գրութիւնը կը գործանեն , հիւանդին միտքը կը յարգարէ և վերջա-
պէս առողջութիւնը ձեռք կը բերէ :

Հոլ օուէի դեղահատերը ամենեւն օգտակար դեղերն են հե-
տեւեալ հիւանդութեանց համար :

Հիւանդութեան , Յոգեւորութեան , Թորացաւութեան ,
Միւսնային ախտ , Տեւաւաւութեան , Ցաւը որովայնի ,
Խիթ (Էֆէթ) , Զրգողութեան , Միկարգութեան ,
Հարուրդ , Ընտանգութեան , Բարբոսմ ,
Ծխախոտի ախտ , Գաղութեան , Ախտը ընդերաց ,
Թանջ (Էֆէթ) , Բաւարիւն սրտի , Ընկանութեան կա-
խալ պարանոցի , Բար կամ խիթ միջա-
նայն , Վերնատութեան , Նայի , Մորթային հիւանդու-
թեան , Կրկն հիւանդութեան Գլխացաւութեան , Թիւնը ,
Փողացա , Ափրոգիտեան ախտ , Խցողութեան :

Գիտեալ արժան է որ սակաւ հրահանգներ կան ամեն լեղուով
որոյմէ մէկ հատ կը գտնուի իւրաքանչիւր սուսին մէջ 'ի տեղե-
կութեան հիւանդաց , ամեն պարագայից մէջ :

Այս դեղահատերը , որ կը շինուին Հոլ օուէի լծակն անձա-
կան վերաւորութեամբ , կը վաճառուին իւր գործարանը 'ի Լու-
տան , Օքսֆորտ կոչուած փողոցը թիւ 533 , 'ի զին 1 և 1 ուկե-
սը ընդ , 2 3/4 և 4 1/2 շրթին տուփը , ըստ մեծութեան տփոց :

Խմրագիր—տէր լրագրոյս ,

Գ. Է. Գ. Վանիկեք :

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐՇԱՆՈՅՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ